

Հավելված  
Ջերմուկ համայնքի ավագանու 2022 թ.  
մայիսի 13-ի N 51-Ա որոշման

**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ  
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔ**

**ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ  
ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ**



**Կազմել է՝ համայնքի ղեկավար Վահագն Արսենյանը**

**Հաստատվել է՝ համայնքի ավագանու 2022 թ. մայիսի 13-ի N 51-Ա որոշմամբ**

**ՋԵՐՄՈՒԿ 2022թ.**

## Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	3
1. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ ԵՎ ՈԼՈՐՏԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ.....	4
2. ՀԱՄԱՅՆՔԻ 2022 Թ. ԾՐԱԳՐԵՐԻ ՑԱՆԿԸ ԵՎ ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՆՔԵՐԸ (ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ) .....	8
3. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2022 Թ. ԾՐԱԳԻՐԸ .....	30
4. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՊ-Ի ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՊԼԱՆԸ.....	36
5. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՊ-Ի ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՊԼԱՆԸ .....	40

## Ներածություն

ՏԱՊ-ը համայնքում առկա ֆինանսական, վարչական, մարդկային և սոցիալական ռեսուրսները կամ կապիտալները կառավարելու գործիք է, այն փաստաթուղթ է, ուր հստակորեն ներկայացվում են սոցիալական, տնտեսական, մարդկային, բնական և այլ ռեսուրսների ներդրման միջոցով համայնքի զարգացմանն ուղղված՝ տվյալ տարվա համար ՏԻՄ-երի ռազմավարությունները, ծրագրերը և միջոցառումները:<sup>1</sup>

Ջերմուկ համայնքի ՏԱՊ-ը մշակվել է հետևյալ հիմնական նպատակներով՝

- համակարգել ՏԻՄ-երի տվյալ տարվա անելիքները,
- սահմանել սոցիալ-տնտեսական զարգացման առաջնահերթությունները, գնահատել համայնքի ներքին ռեսուրսները, հաշվառել համայնքում ներդրվող արտաքին ռեսուրսները, հաշվարկել համախառն ռեսուրսները և բացահայտել պակասուրդը (դեֆիցիտը),
- համախմբել համայնքում տվյալ տարվա համար նախատեսվող բոլոր ծրագրերը և միջոցառումները ՀՀԶԾ-ով սահմանված՝ համայնքի տեսլականի և հիմնական նպատակների իրականացման շուրջ,
- շաղկապել նախատեսվող ծրագրերը և միջոցառումները դրանց իրականացման արդյունքների հետ՝ կիրառելով ՀՀԶԾ-ի ոլորտային ծրագրի «Տրամաբանական հենքը»,
- որոշակիացնել նախատեսվող ծրագրերի և միջոցառումների իրականացման ֆինանսական աղբյուրները և միջոցները, պատասխանատուները և ժամկետները, մշակել տվյալ տարվա ՏԱՊ-ի իրականացման ՄԳՊ-ը:

Ջերմուկ համայնքի 2022թ. տարեկան աշխատանքային պլանը բաղկացած է 5 բաժիններից.

**1-ին բաժնում** սահմանվում է համայնքի տեսլականը և ոլորտային նպատակները:

**2-րդ բաժնում** ներկայացվում է համայնքի 2022 թվականի ծրագրերի ցանկը և տրամաբանական հենքերը (ըստ ոլորտների):

**3-րդ բաժնում** ներկայացվում է համայնքային գույքի կառավարման 2022 թվականի ծրագիրը:

**4-րդ բաժնում** ներկայացվում է համայնքի ՏԱՊ-ի ֆինանսավորման պլանը:

**5-րդ բաժնում** ներկայացվում է համայնքի ՏԱՊ-ի մոնիթորինգի և գնահատման պլանը:

---

<sup>1</sup> «Մեթոդական ուղեցույց համայնքի տարեկան աշխատանքային պլանի մշակման», ԳՄՀԸ, ՀՖՄ, 2017

# 1. Համայնքի տեսլականը և ոլորտային նպատակները

## Համայնքի տեսլականը՝

Ջերմուկը բարեկարգ, մաքուր և գեղատեսիլ համայնք է՝ հագեցած ենթակառուցվածքներով, ժամանակակից հանգստյան տներով, առողջարաններով, ուր «ծաղկում» է փոքր և միջին ձեռներեցությունը: Համայնքի բնակչությանը մատուցվում են բարձրակարգ հանրային ծառայություններ, իսկ բնակիչները ձևավորել են ամուր քաղաքացիական հասարակություն:

## Աղյուսակ 1. Համայնքի կայուն զարգացման ցուցանիշները

Ցուցանիշ	Ելակետային արժեք	Թիրախային արժեք
Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների թվի տեսակարար կշիռը համայնքի ընտանիքների ընդհանուր թվի մեջ (%)	12	10
Համայնքի բյուջեի սեփական եկամուտների տեսակարար կշիռն ընդհանուր եկամուտների մեջ (%)	69.7	72
Բնակչության զբաղվածության աճ	66	70
Զբոսաշրջության զարգացում, ոլորտին առնչվող ծառայությունների աստիճանական ընդլայնում (%)	78	80
Համայնքում հաշվառված բնակիչների ընդհանուր թիվը (մարդ)	8055	8400

## Աղյուսակ 2. Համայնքի ոլորտային նպատակները

Ոլորտային նպատակ	Վերջնական արդյունքի՝		
	Ցուցանիշ	Ելակետային արժեք	Թիրախային արժեք
<b>Ոլորտ 1. Ընդհանուր</b>			
Ապահովել տեղական ինքնակառավարման իրականացումը Ջերմուկ համայնքում, ունենալ բնակչությանը համայնքային ծառայությունների մատուցման արդյունավետ, մասնագիտացված, նպատակային և թափանցիկ համակարգ	Համայնքի բնակիչների բավարարվածությունը (հարցումների հիման վրա) ՏԻՄ-երի գործունեությունից, մատուցվող հանրային ծառայություններից, %	92	93
	Համայնքի բնակիչների մասնակցությամբ ՏԻՄ-երի (համայնքի ղեկավարի, համայնքի ավագանու) կողմից կայացված որոշումների թվի տեսակարար կշիռը կայացված որոշումների ընդհանուր թվի մեջ, %	22	25
	Համայնքի բյուջեի սեփական եկամուտների տեսակարար կշիռը համայնքի բյուջեի ընդհանուր եկամուտների կազմում, %	69.7	72



<b>Ոլորտ 2. Պաշտպանության կազմակերպում</b>			
Հատկացում ռազմական հաստատություններին	Հայստանի Հանրապետության սահմանների պաշտպանունակության բարձրացում և կահավորում	85	90
<b>Ոլորտ 3. Արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանություն և քաղաքացիական պաշտպանության կազմակերպում</b>			
Համայնքում փրկարար ծառայությանն աջակցում, բնական աղետներից բնակչության կրած վնասների փոխհատուցում, շենք-շինությունների վերանորոգում	Համայնքի բնակիչների բավարարվածությունը քաղաքացիական պաշտպանության ոլորտում մատուցվող ծառայություններից, %	43	48
<b>Ոլորտ 4. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն</b>			
Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության ոլորտում ապահովել որակյալ ծառայությունների մատուցումը	Համայնքի բնակիչների բավարարվածությունը քաղաքաշինության և կոմունալ տնտեսության ոլորտում մատուցվող ծառայություններից, %	53	57
<b>Ոլորտ 5. Հողօգտագործում</b>			
Նախատեսվում է աճուրդային եղանակով վաճառել ընդհանուր 13.1 հա մակերեսով հողակտորներ	Համայնքի բնակիչների բավարարվածությունը աճուրդների կազմակերպման և իրականացման ոլորտում մատուցվող ծառայություններից	80	85
<b>Ոլորտ 6. Տրանսպորտ</b>			
Բարելավել համայնքային ենթակառուցվածքի և ինժեներական կառույցների սպասարկման, շահագործման և պահպանման ծառայությունների որակը	Բարեկարգ ներբնակավայրային փողոցների մակերեսի տեսակարար կշիռն ընդհանուրի կազմում, %	45	50
	Զբոսաշրջությունից եկամուտ ստացող տնային տնտեսությունների աճը նախորդ տարվա համեմատ, %	20	25
<b>Ոլորտ 7. Առևտուր և ծառայություններ</b>			
2022 թվականին առևտրի և ծառայությունների ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել	-	-	-
<b>Ոլորտ 8. Կրթություն</b>			
Ապահովել համայնքում կրթական ծառայությունների արդյունավետ մատուցումը	Համայնքի բնակիչների համար կրթական ծառայությունների հասանելիության մակարդակի բարձրացում, %	50	55

	Բնակիչների բավարարվածությունը մատուցվող նախադպրոցական կրթության ծառայությունից, %	95	96
	Մատուցվող նախադպրոցական կրթության ծառայության հասանելիությունը համայնքի բնակիչներին, %	85	88
	Արտադպրոցական դաստիարակության խմբակներում ընդգրկված երեխաների թվի տեսակարար կշիռը դպրոցական տարիքի երեխաների ընդհանուր թվի մեջ, %	55	60
<b>Ոլորտ 9. Մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ</b>			
Ապահովել ՏԻՄ-երի կողմից համայնքի բնակչությանը մշակույթի և երիտասարդության հետ տարվող որակյալ և մատչելի ծառայությունների մատուցումը	Մատուցվող մշակութային ծառայությունների հասանելիությունը համայնքի կենտրոն չհանդիսացող բնակավայրերի բնակիչներին, %	77	80
	Գրադարանից օգտվողների թվի տարեկան աճը, %	9	15
	Համայնքում մշակութային հիմնարկ հաճախող երեխաների տեսակարար կշիռն դպրոցահասակ երեխաների ընդհանուր թվի մեջ, %	50	60
<b>Ոլորտ 10. Առողջապահություն</b>			
2022 թվականին առողջապահության ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել	-	-	-
<b>Ոլորտ 11. Ֆիզիկական կուլտուրա և սպորտ</b>			
Ապահովել Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում որակյալ ծառայությունների մատուցումը	Մարզական խմբակներում ընդգրկված երեխաների թվի տեսակարար կշիռը համապատասխան տարիքի երեխաների թվի կազմում, %	55	60
	Մատուցվող մարզական ծառայությունների մատչելիությունը համայնքի կենտրոն չհանդիսացող բնակավայրերի բնակիչներին, %	60	65
<b>Ոլորտ 12. Սոցիալական պաշտպանություն</b>			

Օգնել համայնքի սոցիալապես անապահով բնակիչներին՝ բարելավելու նրանց սոցիալական վիճակը	Սոցիալական ծրագրի շահառուների բավարարվածությունը իրականացվող ծրագրից, %	95	98
<b>Ոլորտ 13. Գյուղատնտեսություն</b>			
2022 թվականի ընթացքում գյուղատնտեսության ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել			
<b>Ոլորտ 14. Անասնաբուժություն և բուսասանիտարիա</b>			
Նպաստել համայնքում անասնապահության զարգացմանը	Անասնապահության բնագավառում զբաղվածության աճը նախորդ տարվա համեմատ, %	5	8
<b>Ոլորտ 15. Շրջակա միջավայրի պահպանություն</b>			
Ապահովել համայնքի բնակիչների առողջության և շրջակա միջավայրի վրա աղբի բացասական ներգործության նվազեցումը և չեզոքացումը, ստեղծել բնակության համար հարմարավետ և էկոլոգիապես անվտանգ պայմաններ	Աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների մատուցումից բնակչության բավարարվածության աստիճանի բարձրացումը (հարցումների հիման վրա), %-ով	90	95
<b>Ոլորտ 16. Զբոսաշրջություն</b>			
Նպաստել զբոսաշրջության զարգացմանը՝ համայնքը դարձնելով առավել հայտնի և ճանաչված	Համայնք այցելած զբոսաշրջիկների թվի աճը նախորդ տարվա համեմատ, %	12	15
<b>Ոլորտ 17. Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցություն</b>			
2022 թվականի ընթացքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել		-	-

## 2. Համայնքի 2022 թ. ծրագրերի ցանկը և տրամաբանական հենքերը (ըստ ոլորտների)

### Աղյուսակ 3. ՏԱՊ-ի ծրագրերը, որոնք ապահովված են համապատասխան ֆինանսական միջոցներով

Հ/հ	Ծրագրի անվանումը	Ծրագրի արժեքը (հազ. դրամ)	ԲԲՀ-ի բնակավայրը
<b>Ոլորտ 1. Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ</b>			
1.	Համայնքային ծառայությունների արդյունավետ, թափանցիկ կառավարում, ենթակառուցվածքների գործունեության պահպանում /Ջերմուկի համայնքապետարանի, ՔԿԱԳ բաժնի, Կեչուտ և Գնդեվազ գյուղերում վարչական ծառայությունների մատուցում, համակարգչային ծառայությունների ձեռք բերում /	158,994.11	ընդհանուր համայնքային
2	Համայնքի վարչական ղեկավարների նստավայրերի հիմնանորոգման աշխատանքների իրականացում	15940	Կեչուտ, Գնդեվազ
<b>Ընդամենը</b>		<b>174,934.11</b>	-
<b>Ոլորտ 2. Պաշտպանության կազմակերպում</b>			
1.	Հատկացում ռազմական հաստատություններին՝ Հայստանի Հանրապետության սահմանների պաշտպանունակության բարձրացման և կահավորվածության ապահովման նպատակով	5700	ընդհանուր համայնքային
<b>Ընդամենը</b>		<b>5700</b>	-
<b>Ոլորտ 3. Արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանություն և քաղաքացիական պաշտպանության կազմակերպում</b>			
1.	Համայնքում փրկարար ծառայությանն աջակցում, բնական աղետներից բնակչության կրած վնասների փոխհատուցում, շենք-շինությունների հիմնանորոգում	3250	ընդհանուր համայնքային
<b>Ընդամենը</b>		<b>3250</b>	-
<b>Ոլորտ 4. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն</b>			
1.	Փողոցային լուսավորության անխափան աշխատանքի ապահովում	28497.821	ընդհանուր համայնքային
2.	Ջերմուկ քաղաքի Արփա գետի կիրճի և Ջերմուկի խորհրդանիշ եղնիկի արձան տանող ճանապարհի շրջակա ժայռերի լուսավորության իրականացում	15000	Ջերմուկ
3.	Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգի սպասարկում և վերանորոգում	2582.25	ընդհանուր համայնքային
4.	Համայնքի բնակարանային ֆոնդի սպասարկում	5073.8	ընդհանուր համայնքային
5	Ասֆալտբետոնյա ծածկի վերանորոգում և պահպանում	1500	ընդհանուր համայնքային
6	Ջերմուկ համայնքի կարիքների համար մեքենասարքավորումների և գույքի ձեռք բերում /ոտորակ, նստարան, աղբաման/	80000	Ջերմուկ
7	Ջերմուկ քաղաքում այգիների, պուրակների կառուցում/բարեկարգում (Աջափնյա թաղամասում՝ Վ. Սարգսյանի անվան, Ձախափնյա թաղամասում՝ Ազատամարտիկների փողոցի սկզբնամասի)	22500	Ջերմուկ

8	Ջերմուկ համայնքում հասարակական շենքերի կառուցում/վերանորոգում ( Մյասնիկյան փող. 4-րդ բնակելի շենքի տանիքի հիմնանորոգում, համայնքում ընդգրկված բնակավայրերում կանգառների տաղավարների հիմնանորոգում, նորերի տեղադրում, համայնքում ընդգրկված բնակավայրերում բակային և հասարակական այլ տարածքների աստիճանների հիմնանորոգում, Կեչուտ և Գնդեվազ գյուղերի հանդիսության սրահների հիմնանորոգում, աղբամանների տեղակայման վայրերի բարեկարգում)	73,753.84	
<b>Ընդամենը</b>		<b>228,907.71</b>	
<b>Ոլորտ 5. Հողօգտագործում</b>			
1	Հողօգտագործման ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում	-	-
<b>Ընդամենը</b>		-	-
<b>Ոլորտ 6. Տրանսպորտ</b>			
1	Խողովակաշարային տրանսպորտային ծառայությունների մատուցում, ներհամայնքային ճանապարհային տնտեսության պահպանություն	61203.472	ընդհանուր համայնքային
<b>Ընդամենը</b>		<b>61203.472</b>	-
<b>Ոլորտ 7. Առևտուր և ծառայություններ</b>			
	2022 թվականին առևտրի և ծառայությունների ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում:	-	-
<b>Ընդամենը</b>		-	-
<b>Ոլորտ 8. Կրթություն</b>			
1.	Նախադպրոցական և արտադպրոցական կրթության կազմակերպում	172145.973	Ջերմուկ, Կեչուտ, Գնդեվազ
<b>Ընդամենը</b>		<b>172145.973</b>	-
<b>Ոլորտ 9. Մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ</b>			
1.	Ջերմուկի հանրային գրադարան համայնքային հիմնարկի պահպանում և գրքային ֆոնդի համալրում	4432.53	Ջերմուկ
2	Աջակցություն քաղաքացիական , հասարակական, տեղեկատվական կառույցներին, կրոնական և երիտասարդական կազմակերպություններին	1800	ընդհանուր համայնքային
<b>Ընդամենը</b>		<b>6232.53</b>	-
<b>Ոլորտ 10. Առողջապահություն</b>			
	2022 թվականին առողջապահության ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում	-	-
<b>Ընդամենը</b>		-	-
<b>Ոլորտ 11. Ֆիզիկական կուլտուրա և սպորտ</b>			
1.	«Ջերմուկի մարզամշակութային կենտրոն» ՀՈԱԿ-ի կողմից մատուցվող ծառայությունների ընթացիկ մակարդակի պահպանում	33622.627	ընդհանուր համայնքային
<b>Ընդամենը</b>		<b>33622.627</b>	
<b>Ոլորտ 12. Սոցիալական պաշտպանություն</b>			
1.	Աջակցություն համայնքի սոցիալապես անապահով բնակիչներին	19000	ընդհանուր համայնքային
<b>Ընդամենը</b>		<b>19000</b>	-



<b>Ոլորտ 13. Գյուղատնտեսություն</b>			
	2022 թվականին գյուղատնտեսության ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում	-	
<b>Ոլորտ 14. Անասնաբուծություն և բուսասանիտարիա</b>			
1.	Անասնաբուծական ծառայությունների մատուցում	6312.7	ընդհանուր համայնքային
<b>Ընդամենը</b>		<b>6312.7</b>	-
<b>Ոլորտ 15. Շրջակա միջավայրի պահպանություն</b>			
1.	Համայնքի տարածքում աղբահանության, սանիտարական մաքրման, բարեկարգման և կանաչ տարածքների խնամքի աշխատանքների կազմակերպում և իրականացում	93720.468	ընդհանուր համայնքային
<b>Ընդամենը</b>		<b>93720.468</b>	-
<b>Ոլորտ 16. Զբոսաշրջություն</b>			
1.	Համայնքի զբոսաշրջային գովազդը ապահովող հուշանվերների, քարտեզների, բուկլետների տպագրում, կինոֆիլմի, գովազդային հոլովակների նկարահանում	5400	ընդհանուր համայնքային
<b>Ընդամենը</b>		<b>5400</b>	-
<b>Ոլորտ 17. Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցություն</b>			
1.	2022 թվականին տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում	-	-
<b>Ընդհանուրը</b>		<b>810,429.591</b>	-

**Աղյուսակ 4. ՏԱՊ-ի ծրագրերը, որոնք ապահովված չեն համապատասխան ֆինանսական միջոցներով**

Հ/հ	Ծրագրի անվանումը	Ծրագրի արժեքը (հազ. դրամ)	ԲԲՀ-ի բնակավայրը
<b>Ոլորտ 4. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն</b>			
1.	Գյուղական բնակավայրերի խմելու ջրի կապտածների հիմնանորոգում	20000.0	Կեչուտ, Գնդեվազ
2.	Գերեզմանի ցանկապատում	10000.0	Ջերմուկ, Կեչուտ
<b>Ընդամենը</b>		<b>30000.0</b>	
<b>Ոլորտ 16. Զբոսաշրջություն</b>			
1.	Տուրիստական Տեղեկատվական Կենտրոնի (ՏՏԿ) ստեղծում Ջերմուկ քաղաքում	12000.0	Ջերմուկ
2.	Ջերմուկ համայնքի ճոպանուղու հարակից տարածքի բարեկարգում	45000.0	Ջերմուկ
<b>Ընդամենը</b>		<b>57000.0</b>	-
<b>Ընդհանուրը</b>		<b>87000.0</b>	-

**Աղյուսակ 5. ՏԱՊ-ով նախատեսված ծրագրերի տրամաբանական հենքերը՝ ըստ համայնքի ղեկավարի լիազորությունների ոլորտների**

Ամփոփ նկարագիր	Արդյունքային ցուցանիշներ	Տեղեկատվության աղբյուրներ	Պատասխանատու	Ժամկետ	Ռիսկեր
<b>Ոլորտ 1. Ընդհանուր</b>					
<b>Ոլորտային նպատակ</b> Ապահովել տեղական ինքնակառավարման իրականացումը Ջերմուկ համայնքում, ունենալ բնակչությանը համայնքային ծառայությունների մատուցման արդյունավետ, մասնագիտացված, նպատակային և թափանցիկ համակարգ		<b>Ոլորտի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ</b> ✓ Համայնքի բնակիչների բավարարվածությունը (հարցումների հիման վրա) ՏԻՄ-երի գործունեությունից, մատուցվող հանրային ծառայություններից, 93% ✓ Համայնքի բնակիչների մասնակցությամբ ՏԻՄ-երի (համայնքի ղեկավարի, համայնքի ավագանու) կողմից կայացված որոշումների թվի տեսակարար կշիռը կայացված որոշումների ընդհանուր թվի մեջ, 25 % ✓ Համայնքի բյուջեի սեփական եկամուտների տեսակարար կշիռը համայնքի բյուջեի ընդհանուր մուտքերի կազմում, 72%			
<b>Ծրագիր 1. Համայնքային ծառայությունների արդյունավետ, թափանցիկ կառավարում, ենթակառուցվածքների գործունեության պահպանում</b>					
<b>Ծրագրի նպատակ</b> Բարելավել բնակչությանը մատուցվող հանրային ծառայությունների որակը	<b>Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ</b> Բնակչությանը մատուցվող հանրային ծառայությունների որակը՝ լավ	Ծրագրի գնահատման համակարգ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ	Համայնքի ղեկավար, աշխատակազմի քարտուղար, բնակավայրերի վարչական ղեկավարներ	2022թ. հունվար-դեկտեմբեր	Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների առկայություն
<b>Միջանկյալ արդյունք 1</b> Ապահովվել է աշխատակազմի բնականոն գործունեությունը	<b>Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ)</b> 1. Համայնքի աշխատակազմի աշխատողների թիվը, 25 2. Աշխատակիցների գործունեության արդյունավետության բարձրացում, 3% 3. Համայնքի աշխատակազմի աշխատանքային օրերի թիվը տարվա ընթացքում, 254 օր 4. Համայնքի պաշտոնական համացանցային կայքի առկայությունը՝ այո	Աշխատակազմ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ, քաղաքացիական հասարակության կազմակերպություններ և խմբեր, բնակիչներ	Համայնքի ղեկավար, աշխատակազմի քարտուղար, վարչական ղեկավարներ	2022թ. հունվար-դեկտեմբեր	Համապատասխան մարդկային և ֆինանսական ռեսուրսների առկայություն

	<p>5. ՏԻՄ-երի, աշխատակազմի գործունեության վերաբերյալ բնակիչների կողմից ստացվող դիմում-բողոքների թվի նվազում, 10%</p> <p>6. Աշխատակազմում առկա տեղեկատվական և հեռահաղորդակցության համակարգերի օգտագործման մակարդակը, 90%</p> <p>7. Աշխատակազմում ստացված մեկ դիմումին պատասխանելու միջին ժամանակը, 4 օր</p>				
--	--	--	--	--	--

<p><b>Միջոցառումներ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Աշխատակազմի բնականոն գործունեության ապահովում</li> <li>2. Քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցումներ</li> <li>3. Համակարգչային ծառայությունների ձեռք բերում</li> <li>4. Մասնագիտական ծառայությունների ձեռք բերում</li> <li>5. Ջերմուկ համայնքի Կեչուտ բնակավայրի վարչական ղեկավարի և առաջատար մասնագետի գործունեության ապահովում</li> <li>6. Ջերմուկ համայնքի Գնդեվազ բնակավայրի վարչական ղեկավարի և առաջատար մասնագետի գործունեության ապահովում</li> </ol>	<p><b>Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Համայնքի տարեկան բյուջեով նախատեսված պահպանման ծախսեր՝ 158,994.11 հազ. դրամ</li> <li>2. Համայնքի աշխատակազմի աշխատակիցների թիվը՝ 25</li> <li>3. Համայնքի հողի հարկի և գույքահարկի գանձման ավտոմատացված համակարգեր՝ 1</li> <li>4. Համայնքապետարանի վարչական շենք և գույք</li> <li>5. Վարչական ներկայացուցիչների նստավայրերի շենքեր և գույք</li> <li>6. Աշխատակազմում առկա համակարգչային սարքերի և սարքավորումների թիվը 44</li> <li>7. Համայնքի պաշտոնական համացանցային կայք <a href="http://www.jermuk.am/">http://www.jermuk.am/</a></li> </ol>
--	---

**Ծրագիր 2. Համայնքի վարչական ղեկավարների նստավայրերի հիմնանորոգման աշխատանքների իրականացում**

<p><b>Ծրագրի նպատակ</b> Բարելավել բնակչությանը մատուցվող հանրային ծառայությունների որակը, աշխատակիցների համար ստեղծել բարեկեցիկ և հարմարավետ աշխատանքային պայմաններ</p>	<p><b>Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ</b> Բնակչությանը մատուցվող հանրային ծառայությունների որակը՝ լավ</p>	<p>Ծրագրի գնահատման համակարգ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ</p>	<p>Համայնքի ղեկավար, աշխատակազմի քարտուղար, բնակավայրերի վարչական ղեկավարներ</p>	<p>2022թ. փետրվար-հոկտեմբեր</p>	<p>Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների առկայություն</p>
<p><b>Միջանկյալ արդյունք 1</b></p>	<p><b>Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ)</b></p>	<p>Աշխատակազմ, ՄԳ կիսամյակային,</p>	<p>Համայնքի ղեկավար,</p>	<p>2022թ. փետրվար</p>	<p>Համապատասխան մարդկային և</p>

Ապահովվել է աշխատակազմի բնականոն գործունեությունը	<ol style="list-style-type: none"> <li>1. Համայնքի աշխատակազմի աշխատողների թիվը՝ 25</li> <li>2. Աշխատակիցների գործունեության արդյունավետության բարձրացում, 3%</li> <li>3. աշխատանքային պայմանների բարելավում</li> <li>4. Համայնքի աշխատակազմի աշխատանքային օրերի թիվը տարվա ընթացքում, 254 օր</li> <li>5. Համայնքի պաշտոնական համացանցային կայքի առկայությունը՝ այո</li> <li>6. ՏԻՄ-երի, աշխատակազմի գործունեության վերաբերյալ բնակիչների կողմից ստացվող դիմում-բողոքների թվի նվազում, 10%</li> <li>7. Աշխատակազմում առկա տեղեկատվական և հեռահաղորդակցության համակարգերի օգտագործման մակարդակը, 90%</li> </ol>	տարեկան հաշվետվություններ, քաղաքացիական հասարակության կազմակերպություններ և խմբեր, բնակիչներ	աշխատակազմի քարտուղար, վարչական ղեկավարներ	ր-հոկտեմբեր	ֆինանսական ռեսուրսների առկայություն
<b>Միջոցառումներ</b> <ol style="list-style-type: none"> <li>1. Աշխատակազմի բնականոն գործունեության ապահովում</li> <li>2. Գնումների գործընթացի կազմակերպում նախագծանախահաշվային փաստաթղթերի, գրասենյակային գույքի, շինարարական աշխատանքների իրականացման ձեռք բերման նպատակով</li> <li>3. Շինարարական աշխատանքների իրականացում</li> <li>4. Զերմուկ համայնքի Կեչուտ բնակավայրի վարչական ղեկավարի և առաջատար մասնագետի գործունեության ապահովում</li> <li>5. Զերմուկ համայնքի Գնդեվազ բնակավայրի վարչական ղեկավարի և առաջատար մասնագետի գործունեության ապահովում</li> </ol>		<b>Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)</b>  <b>Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)</b> <ul style="list-style-type: none"> <li>✓ Համայնքի բյուջեի միջոցներ՝ 15940 հազար դրամ</li> <li>✓ Վերանորոգման աշխատանքներում ներգրավված աշխատողների թիվը 8</li> </ul>			
<b>Ոլորտ 2. Պաշտպանության կազմակերպում</b>					
Հատկացում ռազմական հաստատություններին					
<b>Ոլորտ 3. Արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանություն և քաղաքացիական պաշտպանության կազմակերպում</b>					
Համայնքում փրկարար ծառայությանն աջակցում, բնական աղետներից բնակչության կրած վնասների փոխհատուցում, շենք-շինությունների հիմնանորոգում					
<b>Ոլորտային նպատակ</b> Արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանություն և քաղաքացիական պաշտպանության վերաբերյալ տեղեկատվության մատչելիության ապահովում, բնական աղետներից բնակչության կրած վնասների փոխհատուցում, շենք-շինությունների վերանորոգում	<b>Ոլորտի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշներ</b> Համայնքի բնակիչների բավարարվածությունը քաղաքացիական պաշտպանության ոլորտում մատուցվող ծառայություններից, 45%				



**Ծրագիր 1. Համայնքում փրկարար ծառայությանն աջակցում, բնական աղետներից բնակչության կրած վնասների փոխհատուցում, շենք-շինությունների վերանորոգում**

<p><b>Ծրագրի նպատակ</b> Արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանություն և քաղաքացիական պաշտպանության վերաբերյալ տեղեկատվության մատչելիության ապահովում, բնական աղետներից բնակչության կրած վնասների փոխհատուցում, շենք-շինությունների վերանորոգում</p>	<p><b>Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշներ</b> ✓ Համայնքի բնակիչների բավարարվածությունը քաղաքացիական պաշտպանության ոլորտում մատուցվող ծառայություններից 50%</p>	<p>Ծրագրի գնահատման համակարգ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ</p>	<p>Համայնքի ղեկավար, աշխատակազմի քարտուղար</p>	<p>2022թ. հունվար-դեկտեմբեր</p>	<p>Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների առկայություն</p>
<p><b>Միջանկյալ արդյունք 1</b> Մեծացել է արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանություն և քաղաքացիական պաշտպանության վերաբերյալ տեղեկատվածությունը</p>	<p><b>Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ)</b> ✓ Համայնքի բնակիչների բավարարվածությունը քաղաքացիական պաշտպանության ոլորտում մատուցվող ծառայություններից 50%</p>	<p>Աշխատակազմ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ, քաղաքացիական հասարակության կազմակերպություններ և խմբեր, բնակիչներ</p>		<p>2022թ. հունվար-դեկտեմբեր</p>	<p>Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների առկայություն</p>

**Միջոցառումներ**  
Արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանություն և քաղաքացիական պաշտպանության վերաբերյալ տեղեկատվության մատչելիության ապահովում, բնական աղետներից բնակչության կրած վնասների փոխհատուցում, շենք-շինությունների վերանորոգում

**Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)**  
✓ Համայնքի բյուջեի միջոցներ՝ 3250.0 հազար դրամ  
Իրագեկման աշխատանքներում ներգրավված աշխատողների թիվը՝ 2, վերանորոգման աշխատանքներում՝ 5

**Ոլորտ 4. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն**

<p><b>Ոլորտային նպատակ</b> Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության ոլորտում ապահովել որակյալ ծառայությունների մատուցումը</p>	<p><b>Ոլորտի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշներ</b> Համայնքի բնակիչների բավարարվածությունը քաղաքաշինության և կոմունալ տնտեսության ոլորտում մատուցվող ծառայություններից, 57%</p>
---	--



<b>Ծրագիր 1. Փողոցային լուսավորության անխափան աշխատանքի ապահովում</b>					
<b>Ծրագրի նպատակ</b> Բարձրացնել Ջերմուկ համայնքի փողոցների երթևեկության անվտանգության մակարդակը և դրանք դարձնել հարմարավետ տրանսպորտային միջոցների և հետիոտների համար	<b>Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշներ</b> <ul style="list-style-type: none"> <li>✓ Փողոցների երթևեկության անվտանգության մակարդակը տրանսպորտային միջոցների և հետիոտների համար՝ բավարար</li> </ul>	Ծրագրի գնահատման համակարգ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ,	Համայնքի ղեկավար, բնակավայրերի վարչական ղեկավարներ	2022թ. հունվար-դեկտեմբեր	Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների առկայություն
<b>Միջանկյալ արդյունք 1</b> Ջերմուկ համայնքի բնակավայրերի փողոցների դարձել են հարմարավետ և անվտանգ տրանսպորտային միջոցների և հետիոտների համար	<b>Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ)</b> <ul style="list-style-type: none"> <li>✓ Փողոցների արտաքին լուսավորության համակարգի երկարությունը, 8 կմ</li> <li>✓ Գիշերային լուսավորված փողոցների տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ 80%</li> <li>✓ Գիշերային լուսավորության ժամերի թիվը օրվա կտրվածքով՝ ամռանը 4 ժամ</li> <li>✓ Գիշերային լուսավորության ժամերի թիվը օրվա կտրվածքով՝ ձմռանը 6 ժամ</li> <li>✓ Բնակիչների բավարարվածությունը համայնքում գիշերային լուսավորվածությունից, 80%</li> </ul>	Աշխատակազմ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ, քաղաքացիական հասարակության կազմակերպություններ և խմբեր, բնակիչներ		Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսները առկա են եղել	
<b>Միջոցառումներ</b> <ul style="list-style-type: none"> <li>✓ Ջերմուկ բնակավայրի լուսավորության ցանցի սպասարկում</li> <li>✓ Կեչուտ բնակավայրի լուսավորության ցանցի սպասարկում</li> <li>✓ Գնդեվազ բնակավայրի լուսավորության ցանցի սպասարկում</li> </ul>		<b>Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)</b> <ul style="list-style-type: none"> <li>✓ Համայնքի բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցներ՝ 28497.821 հազ. դրամ</li> <li>✓ «ԶՀԿՍԲ» ՀՈԱԿ-ից՝ փողոցների գիշերային լուսավորության աշխատանքները կազմակերպող և վերահսկող աշխատակիցների թիվը 2</li> <li>✓ Առկա լուսավորության համակարգի երկարությունը՝ 8 կմ</li> <li>✓ Առկա լուսավորության համակարգի հենասյուների թիվը՝ 900</li> <li>✓ Առկա դրոսելների թիվը՝ 900</li> <li>✓ Առկա մեկնարկիչների թիվը՝ 900</li> </ul>			

**Ծրագիր 2. Ջերմուկ քաղաքի Արփա գետի կիրճի և Ջերմուկի խորհրդանիշ եղնիկի արձան տանող ճանապարհի շրջակա ժայռերի լուսավորության իրականացում**

<p><b>Ծրագրի նպատակ</b> Բարձրացնել Ջերմուկ համայնքի փողոցների երթևեկության անվտանգության մակարդակը և դրանք դարձնել հարմարավետ տրանսպորտային միջոցների և հետիոտների համար</p>	<p><b>Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշներ</b></p> <ul style="list-style-type: none"> <li>✓ Փողոցների երթևեկության անվտանգության մակարդակը տրանսպորտային միջոցների և հետիոտների համար՝ բավարար</li> </ul>	<p>Ծրագրի գնահատման համակարգ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ,</p>	<p>Համայնքի ղեկավար, բնակավայրերի վարչական ղեկավարներ</p>	<p>2022թ. հունվար-դեկտեմբեր</p>	<p>Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների առկայություն</p>
<p><b>Միջանկյալ արդյունք 1</b> Ջերմուկ համայնքի բնակավայրերի փողոցների դարձել են հարմարավետ և անվտանգ տրանսպորտային միջոցների և հետիոտների համար</p>	<p><b>Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ)</b></p> <ul style="list-style-type: none"> <li>✓ Փողոցների արտաքին լուսավորության համակարգի երկարությունը, 8 կմ</li> <li>✓ Գիշերային լուսավորված փողոցների տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ 80%</li> <li>✓ Գիշերային լուսավորության ժամերի թիվը օրվա կտրվածքով՝ ամռանը 4 ժամ</li> <li>✓ Գիշերային լուսավորության ժամերի թիվը օրվա կտրվածքով՝ ձմռանը 6 ժամ</li> <li>✓ Բնակիչների բավարարվածությունը համայնքում գիշերային լուսավորվածությունից, 80%</li> </ul>	<p>Աշխատակազմ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ, քաղաքացիական հասարակության կազմակերպություններ և խմբեր, բնակիչներ</p>			<p>Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսները առկա են եղել</p>
<p><b>Միջոցառումներ</b></p> <ul style="list-style-type: none"> <li>✓ կատարել Ջրվեժի փողոցում 500մ երկարությամբ երկկողմանի ժայռերի գեղարվեստական լուսավորում,</li> <li>✓ կատարել եղնիկի արձան տանող ճանապարհի մերձակա՝ 300մ երկարությամբ ժայռերի գեղարվեստական լուսավորում,</li> </ul>		<p><b>Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)</b></p> <ul style="list-style-type: none"> <li>✓ Համայնքի բյուջեի միջոցներ՝ 15000 հազար դրամ</li> <li>✓ Ցանցի կառուցման աշխատանքներում ներգրավված աշխատողների թիվը 15</li> </ul>			

**Ծրագիր 3. Ջրահեռացման համակարգի վերանորոգում**

<p><b>Միջոցառումներ</b></p> <ul style="list-style-type: none"> <li>✓ Կեչուտ և Գնդեվազ գյուղերում ջրահեռացման համակարգի վերանորոգում</li> </ul>	<p><b>Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)</b></p> <ul style="list-style-type: none"> <li>✓ Համայնքի բյուջեի միջոցներ՝ 2582.25 հազար դրամ</li> <li>✓ Վերանորոգման աշխատանքներում ներգրավված աշխատողների թիվը 2</li> </ul>
--	--

**Ծրագիր 4. Համայնքի բնակարանային ֆոնդի սպասարկում**

<p><b>Ծրագրի նպատակ</b> Բարելավել Ջերմուկ համայնքի բնակարանային ֆոնդի սպասարկման և պահպանման ծառայության որակը</p>	<p><b>Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ</b> Ջերմուկ համայնքի բնակչությանը մատուցվող՝ բնակարանային ֆոնդի սպասարկման և պահպանման ծառայության որակը՝ բավարար</p>	<p>Ծրագրի գնահատման համակարգ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ</p>	<p>Համայնքի ղեկավարի տեղակալ</p>	<p>2022թ. հունվար-դեկտեմբեր</p>	<p>Համայնքի բյուջեից անհրաժեշտ ֆինանսական միջոցները ժամանակին հատկացվում են</p>
<p><b>Միջանկյալ արդյունք 1</b> Բարելավվել է Ջերմուկ համայնքի բնակչությանը մատուցվող՝ գերեզմանատան պահպանման ծառայության որակը</p>	<p><b>Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ)</b></p> <ul style="list-style-type: none"> <li>✓ բնակարանային ֆոնդի սպասարկման և պահպանման վիճակը, լավ</li> <li>✓ Աշխատանքների իրականացման ժամկետը, 12 ամիս</li> </ul>	<p>Աշխատակազմ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ, քաղաքացիական հասարակության կազմակերպություններ և խմբեր, բնակիչներ</p>			<p>Համապատասխան ֆինանսական ռեսուրսները առկա են եղել</p>
<p><b>Միջոցառումներ</b></p> <ul style="list-style-type: none"> <li>✓ բնակարանային ֆոնդի սպասարկում</li> </ul>		<p><b>Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)</b></p> <ul style="list-style-type: none"> <li>✓ բնակարանային ֆոնդի սպասարկման ծախսեր՝ 5073.8 հազ. դրամ</li> <li>✓ աշխատանքներում ներգրավված աշխատողների թիվը՝ 2</li> </ul>			
<p><b>Ծրագիր 5. Ասֆալտբետոնյա ծածկի վերանորոգում և պահպանում</b></p>					
<p><b>Ծրագրի նպատակ</b> Ապահովել համայնքային ենթակայության ճանապարհների նորոգումը, գծանշումը և ճանապարհային նշանների տեղադրումը</p>	<p><b>Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ</b></p> <ul style="list-style-type: none"> <li>✓ Համայնքի ենթակայության տակ գտնվող ճանապարհների սպասարկման, շահագործման և պահպանման ծառայությունների մատուցման որակը՝ լավ</li> </ul>	<p>Ծրագրի գնահատման համակարգ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ</p>	<p>Համայնքի ղեկավար, աշխատակազմի քարտուղար,</p>	<p>2022թ. մայիս-</p>	<p>Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների առկայություն</p>

<p><b>Միջանկյալ արդյունք 1</b> Ապահովել համայնքային ենթակայության ճանապարհների նորոգումը, գծանշումը և ճանապարհային նշանների տեղադրումը</p>	<p><b>Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ)</b></p> <ul style="list-style-type: none"> <li>✓ Աշխատանքների իրականացման ժամկետը, 6 ամիս</li> <li>✓ Բարեկարգ միջբնակավայրային ճանապարհների մակերեսի տեսակարար կշիռն ընդհանուրի կազմում, 40 %</li> <li>✓ Ճանապարհների աղով և ավազով մշակման օրերի թիվը 50</li> </ul>	<p>Աշխատակազմ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ, քաղաքացիական հասարակության կազմակերպություններ և խմբեր, բնակիչներ</p>	<p>բնակավայրերի վարչական ղեկավարներ</p>	<p>հոկտեմբեր</p>	<p>Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների առկայություն</p>
<p><b>Միջոցառումներ</b></p> <p>1 Գնումների գործընթացի կազմակերպում նախագծանախահաշվային փաստաթղթերի, շինարարական աշխատանքների իրականացման ձեռք բերման նպատակով, 2 Շինարարական աշխատանքների իրականացում, հսկողության իրականացում, 3 Աշխատանքի արդյունքների ընդունում, ֆինանսավորում, շահագործում, մոնիտորինգ,</p>		<p><b>Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)</b></p> <ul style="list-style-type: none"> <li>✓ Համայնքի բյուջեի միջոցներ՝ 1500.0 հազար դրամ</li> <li>✓ Համայնքապետարանից միջբնակավայրային ճանապարհների բարեկարգման աշխատանքները կազմակերպող աշխատակիցների թիվը 2</li> </ul>			
<p><b>Ծրագիր 6. Ջերմուկ համայնքի կարիքների համար մեքենասարքավորումների և գույքի ձեռք բերում /ռատրակ, նստարան, աղբաման/</b></p>					
<p><b>Ծրագրի նպատակ</b> Բարձրացնել Ջերմուկ համայնքի փողոցների երթևեկության անվտանգության մակարդակը և դրանք դարձնել հարմարավետ տրանսպորտային միջոցների և հետիոտների համար</p>	<p><b>Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշներ</b></p> <ul style="list-style-type: none"> <li>✓ բնակչությանը մատուցվող հանրային ծառայությունների որակը՝ լավ</li> </ul>	<p>Ծրագրի գնահատման համակարգ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ,</p>	<p>Համայնքի ղեկավար, աշատակազմ</p>	<p>2022թ. հունվար-դեկտեմբեր</p>	<p>Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների առկայություն</p>
<p><b>Միջանկյալ արդյունք 1</b> Ջերմուկ համայնքի բնակավայրերի փողոցների դարձել են հարմարավետ և անվտանգ տրանսպորտային</p>	<p><b>Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ)</b></p> <ul style="list-style-type: none"> <li>✓ Ջերմուկի քաղաքային ճոպանուղու համար ձեռք բերված ձյուն տափանոց 1 տեխնիկա,</li> <li>✓ Ջերմուկի համայնապետարանի համար ձեռք բերված 50 նստարան,</li> </ul>	<p>Աշխատակազմ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ, քաղաքացիական հասարակության կազմակերպություններ</p>			<p>Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսները առկա են եղել</p>



միջոցների և հետիոտների համար	✓ Ջերմուկի համայնապետարանի համար ձեռք բերված 50 աղբաման,	եր և խմբեր, բնակիչներ			
<b>Միջոցառումներ</b> 1 Գնումների գործընթացի կազմակերպում անհրաժեշտ գույքի և տեխնիկայի ձեռք բերման նպատակով, 2 Աշխատանքի արդյունքների ընդունում, ֆինանսավորում, շահագործում, մոնիտորինգ,		<b>Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)</b> ✓ Համայնքի բյուջեի միջոցներ՝ 80000 հազար դրամ			
<b>Ծրագիր 7. Ջերմուկ քաղաքում այգիների, պուրակների կառուցում/բարեկարգում (Աջափնյա թաղամասում՝ Վ. Սարգսյանի անվան, Ձախափնյա թաղամասում՝ Ազատամարտիկների փողոցի սկզբնամասի)</b>					
<b>Ծրագրի նպատակ</b> Բարձրացնել Ջերմուկ համայնքի փողոցների երթևեկության անվտանգության մակարդակը և դրանք դարձնել հարմարավետ տրանսպորտային միջոցների և հետիոտների համար	<b>Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշներ</b> ✓ բնակչությանը մատուցվող հանրային ծառայությունների որակը՝ լավ	Ծրագրի գնահատման համակարգ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ,	Համայնքի ղեկավար, աշատակազմ	2022թ. հունվար-դեկտեմբեր	Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների առկայություն
<b>Միջանկյալ արդյունք 1</b> Ջերմուկ համայնքի բնակավայրերի փողոցների դարձել են հարմարավետ և անվտանգ տրանսպորտային միջոցների և հետիոտների համար	<b>Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ)</b> ✓ բարեկարգված քաղաքային զբոսայգու մակերեսը 6000քմ, ✓ խաղա և մարզահրապարակներով հագեցած պուրակների քանակը՝ 1 ✓ Բնակիչների հանգստյան գոտիների բարեկարգման աշխատանքներից՝ 80%	Աշխատակազմ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ, քաղաքացիական հասարակության կազմակերպություններ և խմբեր, բնակիչներ			Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսները առկա են եղել
<b>Միջոցառումներ</b> 1 Գնումների գործընթացի կազմակերպում նախագծանախահաշվային փաստաթղթերի, շինարարական աշխատանքների իրականացման ձեռք բերման նպատակով, 2 Շինարարական աշխատանքների իրականացում, հսկողության իրականացում, 3 Աշխատանքի արդյունքների ընդունում, ֆինանսավորում, շահագործում, մոնիտորինգ,		<b>Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)</b> ✓ Համայնքի բյուջեի միջոցներ՝ 22500 հազար դրամ ✓ Շինարարական աշխատանքներում ներգրավված աշխատողների թիվը 17			



**Ծրագիր 8. Ջերմուկ համայնքում հասարակական շենքերի կառուցում/վերանորոգում ( Մյասնիկյան փող. 4-րդ բնակելի շենքի տանիքի հիմնանորոգում, համայնքում ընդգրկված բնակավայրերում կանգառների տաղավարների հիմնանորոգում, նորերի տեղադրում, համայնքում ընդգրկված բնակավայրերում բակային և հասարակական այլ տարածքների աստիճանների հիմնանորոգում, Կեչուտ և Գնդեվազ գյուղերի հանդիսության սրահների հիմնանորոգում, աղբամանների տեղակայման վայրերի բարեկարգում)**

<p><b>Ծրագրի նպատակ</b> Բարձրացնել Ջերմուկ համայնքի փողոցների երթևեկության անվտանգության մակարդակը և դրանք դարձնել հարմարավետ տրանսպորտային միջոցների և հետիոտների համար</p>	<p><b>Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշներ</b></p> <ul style="list-style-type: none"> <li>✓ բակային աստիճանների անվտանգության մակարդակը հետիոտների համար՝ լավ</li> <li>✓ բնակչությանը մատուցվող հանրային ծառայությունների որակը՝ լավ</li> </ul>	<p>Ծրագրի գնահատման համակարգ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ,</p>	<p>Համայնքի ղեկավար, բնակավայրերի վարչական ղեկավարներ, աշատակազմ</p>	<p>2022թ. հունվար-դեկտեմբեր</p>	<p>Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների առկայություն</p>
<p><b>Միջանկյալ արդյունք 1</b> Ջերմուկ համայնքի բնակավայրերի փողոցների դարձել են հարմարավետ և անվտանգ տրանսպորտային միջոցների և հետիոտների համար</p>	<p><b>Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ)</b></p> <ul style="list-style-type: none"> <li>✓ Հիմնանորոգված բակային աստիճանների թիվը՝ 3,</li> <li>✓ Հիմնանորոգված հանդիսության սրահների թիվը՝ 2,</li> <li>✓ Հիմնանորոգված տանիքների թիվը՝ 1,</li> <li>✓ Բնակիչների բավարարվածությունը կանգառների տաղավարների տեղադրմամբ հարմարավետության ապահովման տեսանկյունից՝ 80%,</li> <li>✓ Բնակիչների բավարարվածությունը աղբամանների տեղերի վերանորոգմամբ սանիտարահիգիենիկ պայմանների վարլավումից՝ 80%</li> </ul>	<p>Աշխատակազմ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ, քաղաքացիական հասարակության կազմակերպություններ և խմբեր, բնակիչներ</p>			<p>Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսները առկա են եղել</p>
<p><b>Միջոցառումներ</b> 1 Գնումների գործընթացի կազմակերպում նախագծանախահաշվային փաստաթղթերի, գրասենյակային գույքի, շինարարական աշխատանքների իրականացման ձեռք բերման նպատակով, 2 Շինարարական աշխատանքների իրականացում, հսկողության իրականացում, 3 Աշխատանքի արդյունքների ընդունում, ֆինանսավորում, մոնիտորինգ,</p>		<p><b>Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)</b></p> <ul style="list-style-type: none"> <li>✓ Համայնքի բյուջեի միջոցներ՝ 73753.84 հազար դրամ</li> <li>✓ Շինարարական աշխատանքներում ներգրավված աշխատողների թիվը՝ 20</li> </ul>			

<b>Ոլորտ 5. Հողագտագործում</b>					
Հողագտագործման ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում					
<b>Ոլորտ 6. Տրանսպորտ</b>					
<b>Ոլորտային նպատակ</b> Բարելավել համայնքային ենթակայության ճանապարհների և ինժեներական կառույցների սպասարկման, շահագործման և պահպանման ծառայությունների որակը			<b>Ոլորտի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշներ</b> <ul style="list-style-type: none"> <li>✓ Բարեկարգ ներբնակավայրային ճանապարհների մակերեսի տեսակարար կշիռն ընդհանուրի կազմում, 50%</li> <li>✓ Զբոսաշրջությունից եկամուտ ստացող տնային տնտեսությունների աճը նախորդ տարվա համեմատ, 25%</li> </ul>		
<b>Ծրագիր 1. Խողովակաշարային տրանսպորտային ծառայությունների մատուցում, ներհամայնքային ճանապարհային տնտեսության պահպանություն</b>					
<b>Ծրագրի նպատակ</b> Ապահովել քաղաքային ճոպանուղու սպասարկման, շահագործման և պահպանման ծառայությունների մատուցումը	<b>Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ</b> <ul style="list-style-type: none"> <li>✓ քաղաքային ճոպանուղու սպասարկման, շահագործման և պահպանման ծառայությունների մատուցման որակը՝ լավ</li> </ul>	Ծրագրի գնահատման համակարգ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ		2022թ. հունվար-դեկտեմբեր	Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների առկայություն
<b>Միջանկյալ արդյունք 1</b> Ապահովել քաղաքային ճոպանուղու սպասարկման, շահագործման և պահպանման ծառայությունների մատուցումը	<b>Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ)</b> <ul style="list-style-type: none"> <li>✓ Աշխատանքների իրականացման ժամկետը, 12 ամիս</li> <li>✓ Համայնքում խողովակաշարային տրանսպորտային ծառայություններ մատուցող կազմակերպությունների թիվը՝ 1</li> <li>✓ Համայնքի բնակիչների բավարարվածությունը քաղաքային ճոպանուղու սպասարկման, շահագործման և պահպանման ծառայություններից 70%</li> </ul>	Աշխատակազմ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ, քաղաքացիական հասարակության կազմակերպություններ և խմբեր, բնակիչներ	Համայնքի ղեկավար, աշխատակազմի քարտուղար, բնակավայրերի վարչական ղեկավարներ		Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների առկայություն
<b>Միջոցառումներ</b> 1. Խողովակաշարային տրանսպորտային ծառայությունների մատուցում,			<b>Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)</b> <ul style="list-style-type: none"> <li>✓ Համայնքի բյուջեի միջոցներ՝ 61203.472 հազար դրամ</li> <li>✓ Խողովակաշարային տրանսպորտային ծառայություններ մատուցող կազմակերպության աշխատանքները կազմակերպող աշխատակիցների թիվը՝ 10</li> </ul>		
<b>Ոլորտ 7. Առևտուր և ծառայություններ</b>					

**Ոլորտ 8. Կրթություն**

<p><b>Ոլորտային նպատակ</b> Ապահովել համայնքում կրթական ծառայությունների արդյունավետ մատուցումը</p>	<p><b>Ոլորտի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշներ</b></p> <ul style="list-style-type: none"> <li>✓ Համայնքի բնակիչների համար կրթական ծառայությունների հասանելիության մակարդակի բարձրացում, 55%</li> <li>✓ Բնակիչների բավարարվածությունը մատուցվող նախադպրոցական կրթության ծառայությունից, 96%</li> <li>✓ Մատուցվող նախադպրոցական կրթության ծառայության հասանելիությունը համայնքի բնակիչներին, 88%</li> <li>✓ Արտադպրոցական դաստիարակության խմբակներում ընդգրկված երեխաների թվի տեսակարար կշիռը դպրոցական տարիքի երեխաների ընդհանուր թվի մեջ, 60%</li> </ul>
--	--

**Ծրագիր 1. Նախադպրոցական և արտադպրոցական կրթության կազմակերպում**

<p><b>Ծրագրի նպատակ</b> Բարձրացնել նախադպրոցական կրթության և արտադպրոցական դաստիարակության ոլորտում մատուցվող ծառայությունների որակը</p>	<p><b>Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշներ</b></p> <ul style="list-style-type: none"> <li>✓ Ծնողների կարծիքը մատուցվող նախադպրոցական կրթության ծառայության վերաբերյալ՝ գերազանց</li> <li>✓ Ծնողների կարծիքը մատուցվող արտադպրոցական դաստիարակության ծառայության վերաբերյալ, լավ</li> </ul>	<p>Ծրագրի գնահատման համակարգ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ</p>		<p>2022թ. հունվար-դեկտեմբեր</p>	<p>Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների առկայություն</p>
<p><b>Միջանկյալ արդյունք 1</b> Ժամանակի մարտահրավերներին պատրաստ, կիրթ և բազմակողմանի զարգացած երեխաներ</p>	<p><b>Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ)</b></p> <ul style="list-style-type: none"> <li>✓ ՆՈՒՀ-եր հաճախող երեխաների ընդհանուր թիվը 200 /այժմ՝ 187/</li> <li>✓ Մանկապարտեզի խմբերի թիվը 8</li> <li>✓ ՆՈՒՀ-ներում աշխատող աշխատակիցների թիվը 50 /այժմ՝ 48/</li> <li>✓ Մանկապարտեզում օրվա ընթացքում սննդի տրամադրման թիվը 3</li> <li>✓ Նախադպրոցական կրթության ծառայության մատուցման ժամաքանակը օրվա ընթացքում, 7 ժամ</li> <li>✓ Արվեստի դպրոց հաճախող երեխաների թիվը 400 /այժմ՝ 372/</li> </ul>	<p>Աշխատակազմ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ, քաղաքացիական հասարակության կազմակերպություններ և խմբեր, բնակիչներ</p>	<p>Համայնքի ղեկավար, աշխատակազմի քարտուղար, բնակավայրերի վարչական ղեկավարներ, ՆՈՒՀ-երի, ՀՈԱԿ-ների տնօրեններ</p>		<p>Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների առկայություն</p>

	✓ Բնակիչների բավարարվածությունը մատուցվող արտադարձարոցական դաստիարակության ծառայությունից, 85%			
--	--	--	--	--

<b>Միջոցառումներ</b> <ul style="list-style-type: none"> <li>✓ Ջերմուկ բնակավայրի «Ձատիկ» մանկապարտեզ նախադարձարոցական ուսումնական հաստատություն կողմից մատուցվող ծառայությունների ընթացիկ մակարդակի պահպանում</li> <li>✓ Գնդեվազ բնակավայրի «Գնդեվազի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կողմից մատուցվող ծառայությունների ընթացիկ մակարդակի պահպանում</li> <li>✓ «Ջերմուկ համայնքի Ռոմանոս Մելիքյանի անվան արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ի կողմից մատուցվող ծառայությունների ընթացիկ մակարդակի պահպանում</li> <li>✓ «Ջերմուկ համայնքի Շ. Ազնավուրի անվան արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ի կողմից մատուցվող ծառայությունների ընթացիկ մակարդակի պահպանում</li> </ul>	<b>Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)</b> <ul style="list-style-type: none"> <li>✓ Համայնքի բյուջեի միջոցներ՝ 172145.973 հազար դրամ</li> <li>✓ Ջերմուկ բնակավայրի «Ձատիկ» մանկապարտեզ նախադարձարոցական ուսումնական հաստատության շենք 2</li> <li>✓ Գնդեվազ բնակավայրի «Գնդեվազի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի շենք 1</li> <li>✓ «Ջերմուկ համայնքի Ռոմանոս Մելիքյանի անվան արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ի 2 շենք և գույք /150 միավոր/</li> <li>✓ «Ջերմուկ համայնքի Շ. Ազնավուրի անվան արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ի շենք և գույք</li> </ul>
---	---

**Ոլորտ 9. Մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ**

<b>Ոլորտային նպատակ</b> Ապահովել ՏԻՄ-երի կողմից համայնքի բնակչությանը մշակույթի և երիտասարդության հետ տարվող որակյալ և մատչելի ծառայությունների մատուցումը	<b>Ոլորտի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշներ</b> <ul style="list-style-type: none"> <li>✓ Մատուցվող մշակութային ծառայությունների հասանելիությունը համայնքի կենտրոն չհանդիսացող բնակավայրերի բնակիչներին 80%</li> <li>✓ Գրադարանից օգտվողների թվի տարեկան աճը , 15%</li> <li>✓ Համայնքում մշակութային հիմնարկ հաճախող երեխաների տեսակարար կշիռն դպրոցահասակ երեխաների ընդհանուր թվի մեջ, 60%</li> </ul>
---	---

**Ծրագիր 1. Ջերմուկի հանրային գրադարան համայնքային հիմնարկի պահպանում և գրքային ֆոնդի համալրում**

<b>Ծրագրի նպատակ</b> Ակտիվացնել համայնքի մշակութային կյանքը	<b>Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշներ</b> <ul style="list-style-type: none"> <li>✓ Մատուցվող մարզական և մշակութային ծառայությունների հասանելիությունը համայնքի կենտրոն չհանդիսացող բնակավայրի բնակիչներին՝ այո</li> </ul>	Ծրագրի գնահատման համակարգ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ	Համայնքի ղեկավար, աշխատակազմի քարտուղար,	2022թ. հունվար-դեկտեմբեր	Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների առկայություն
<b>Միջանկյալ արդյունք 1</b>	<b>Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ)</b>	Աշխատակազմ, ՄԳ կիսամյակային,			Համապատասխան մարդկային,



Ակտիվացել է համայնքի մշակութային կյանքը	<ul style="list-style-type: none"> <li>✓ Տարվա ընթացքում կազմակերպված մշակութային միջոցառումների թիվը 20 /այժմ՝ 5/</li> <li>✓ Գրքային ֆոնդի ծավալը, 22500 կտոր գիրք /այժմ՝ 22223/</li> <li>✓ Գրադարանից օգտվողների թիվը 700 /այժմ՝ 508, հաճախումների թիվը՝ 2963/</li> <li>✓ Բնակիչների բավարարվածությունը մատուցվող մշակութային ծառայություններից, 90%</li> <li>✓ Գրադարանային ծառայությունների մատուցման օրերի թիվը տարվա ընթացքում, 254 օր</li> </ul> <p>*տվյալները 01.01.2022-01.05.2022թ.-ի դրությամբ</p>	տարեկան հաշվետվություններ, քաղաքացիական հասարակության կազմակերպություններ և խմբեր, բնակիչներ	բնակավայրերի վարչական ղեկավարներ		տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների առկայություն
